Բենիամին Ուէսդ:

Նշրեւելի պատկերահանն Բենիամին Ուէսդ, որ նախագահ եղած է Լոնտրայի Թագաւորական գեղարուեստից ակադեմիային, տղայութեանը միջոց իր մեծ հանճարը այսպիսի դէպքով մը յայտնած է, որ լսելու արժանի է։

1745ին յուլիս ամսոյն մէջ, Ուէսդի քոյրը եկաւ իր աղջիկովը հանդերձ քանի մը օր իր մօրը քով անցընելու։ Օր մը երբոր պզտի աղջիկը կը քնանար օրօրոցին մէջ, Ուէսդ տիկինը հրաւիրեց իր աղջիկը որ երթան պարտէզէն ծաղիկ ժողվելու, ու պզտիկը յանձնեց Բենիամինի խնամոցը ինչուան որ իրենք պարտէզէն դառնան, որպէս զի մժղուկները խայթելով չարթընցընեն զանիկայ։ Աստի այսպէս Բենիամին օրօրոցին քով անշարժ կեցած և ձեռքն ալ փետուրէ հովանոց մ'առած՝ ամենայն սիրով հոգ կը տանէր պզտիկին վրայ։ Զուարթ կերպով մը կը քնանար աղջիկը, և քաղցր ժպիտ մը կը փայլէր երեսացը վրայ. անանկ որ Բենիամին մեծ հաճոյք կը զգար զանիկայ անդադար դիտելով։ Քովի ստոլին վրայ դիպուածով թղթի կտորներ ու կարմիր և սև թանաք կը գտնուէր։ Ինքիրմէն ելած՝ առաւ զանոնք ձեռքը, և այլայլութենէն ձեռքը դողդոջուն՝ փորձեց աղջկան կենդանագիրն առնելու։ Նկարչութեան ամենեւին գաղափար մը չունէր, վասն զի նոյն ատենը դեռ եօթը տարեկան էր, ոչ կենդանագիր տեսեր էր և ոչ քանդակ։ Լսելով իրեն մօրը տուն դառնալը, չփոթած ու խռոված՝ մէկէն ծածկեց ձեռքի ստուերագիրը։ Հարցուց մայրը չփոթելուն պատճառը. որուն հնազանդելով տղան՝ տուաւ ձեռքի թուղթը, թողութիւն խնդրելով իր սխալմանը որ առանց հրամանի առեր էր թուղթը։ Մայրը մէկէն ճանչցաւ իր թոռան դէմքը, և փոխանակ յանդիմանելու, ինչպէս որ խեղճ տղան կը վախէր, ողջագուրեց զինքը։ Ասկեց քաջալերուած տղան՝ խնդրեց մօրմէն ձեռքի եղած ծաղկանց փունջն օրինակել։ Ահա աս կերպով արթնցաւ իր հանճարը, և իմացաւ որ անկէց վերջը կրնար ուզած բաներն օրինակել։

Այս դիպուածս հանդիպեցաւ Ամերիկոյ Միացեալ Նահանգաց Բենսիլվանիա նահանգին մէջ, մերձ 'ի Սբրինկֆիլտ, ուր ծնած էր Ուէսդ։

Նորատիպ Մատեանք

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ

ՃԱՌՔ

Յովհան Ոսկեբերան հայրապետին Պօղոսի թղթոց մեկնութեան և այլ և այլ նիւթերու վրայ խօսած հոգելից ճառերուն տպագրութեան սկսելուն վրայ անցեալ տարուան Բազմավէպին Նոյեմբերի թերթին մէջ էջ 359՝ խօսուած ըլլալով, այսչափ միայն կ'իմացընենք հոս որ հարազատ ճառերուն հատորն 'ի լոյս ելաւ, որոնց թիւն է եօթանասունուիրեք։ Ան ամէն բանասէրք որ Ոսկեբերանի եռանդուն և բեղնաւոր պերճախօսութեանը սիրող են և միանգամայն կը փափաքին որ նախնեաց երկասիրութիւնները տպագրութեամբ օգտակար ըլլան հասարակաց, անտարակոյս պիտի ուրախանան իրենց ըղձից մասամբ կատարուելուն վրայ և պիտի քաջալերեն հրատարակիչներն որ նախնեաց ուրիշ գրուածքներն ալ ետեւէ ետև 'ի լոյս հանեն։

ՓԵԴՐԱ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Յ. ՌԱՍԻՆԻ

Փեդրա ողբերգութիւնը Յ. Ռասինի փափուկ ու զգայուն գրչէն ելած ըլլալով գովեստի կարօտ չէ. թէ որ հեղինակը Գորնէյլեան գրած չըլլար, Փեդրան կը մնար իրեն պարծանք ու գլուխ գործոց։ Ասկէց անտարակոյս յորդորուած ազգային բանասէր և աշխոյժ երիտասարդներ, Գ. Հիւր-